Հայտարարություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի վարչական շենքում 2025թ. հոկտեմբերի 13-ին ժամը 15:00-ին տեղի կունենա համայնքային սեփականության տրանսպորտային միջոցների օտարում՝ աճուրդ-վաճառքի միջոցով, դասական եղանակով.

1. 1լոտ՝ LEXUS GX 470 (330 LL 70) թեթև մարդատար ավտոմեքենա, թափքը՝ ունիվերսալ, գույնը՝ արծաթագույն մետալիկ, թողարկման տարեթիվը՝ 2005թ., նույնականացման համար- JTJBT20X450076569, փոխանցման տուփը՝ ավտոմատ: Վիճակը՝ բավարար, շարժիչն և փոխանցման տուփը մասնակի նորոգման կարիք ունեն, Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը՝ միջին: Սալոնը կաշեպատ, մաշված հատվածներով, ընդհանուր վիճակի գնահատականը՝ բավարար: Մեքենայի արտաքին մակերևույթի վրա նկատվում են ներկի ծածկույթի վնասված տեղամասեր: Դիմապակին կոտրված, դիմացի թափարգելի վնասված Մեկնարկային գինը՝ 4100000 (չորս միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. 1լոտ ԳԱԶ 3110 մակնիշի (257 US 35) թեթև մարդատար ավտոմեքենա, թափքը՝ սեդան, գույնը՝ սև, թողարկման տարեթիվը՝ 1998թ., նույնականացման համար- XTH311000W0099223, փոխանցման տուփը՝ մեխանիկական, վազքը՝ ցուցիչի տվյալ՝ դիտարկել հնարավոր չի եղել, վառելիք՝ բենզին: Վիճակը՝ մասնակի անսարք, հիմնական հանգույցները գերմաշված են, ընթացքային մասը գերմաշված է: Անիվները մաշված, մարտկոցը բացակայում է: Հետևի և դիմացի լուսարձակների մի մասը կոտրված, դիմապակին՝ ճաքերով: Մեքենայի իրանի արտաքին մակերևույթի վրա առկա են ներկի ծածկույթի էական վնասված հատվածներ, մետաղական իրանի փոքր դեֆորմացված հատվածներ, վնասված տեղեր, կոռոզիայից քայքայված հատվածներ: Իրանի դետալիների եռակցման որոշ հատվածներում նկատվում է կոռոզիայից քայքայված տեղամասեր: Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը՝ բավարար: Մեքենայի տեխնիկական վիճակի գնահատականը՝ բավարար: Արտաքին տեսքի վիճակի գնահատականը՝ վատ: Սալոնը կտորապատ, պատառոտված տեղամասերով, ընդհանուր վիճակի գնահատականը՝ վատ:

Մեկնարկային գինը՝ 180000 (մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ:

Նախավճարը՝ մեկնարկային գնի 50%-ի չափով: Աճուրդային քայլը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Սահմանափակումներ չկան: Աճուրդում հաղթող կհամարվի առավելագույն գին առաջարկած մասնակիցը: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդային հանձնաժողովին պետք է ներկայացնեն՝ աճուրդին մասնակցության հայտը, անձնագիրը, մուծված նախավճարի անդորագիրը: Հայտերն ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 9:00-18:00: Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Վարդենիս Հ. Անդրեասյան 4: Աճուրդային հանձնաժողով:

Հեռ.(0269)22031